№ 234 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12 — 1900 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12 № 234

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1901** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսվանը՝ 9 ր., ինն եւ ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնակայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չինաստանի հետ պայմանախօսութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մօսկվայի հայկական երեկոյթը. Նամակ Սիմֆերօպոլից. Նամակ Դերբէնտից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—

Հեռագիրը հաղորդում է, որ եւրոպական պետութիւնների ներկայացուցիչներին վերջապէս աջողվեց մշակել և ձեւակերպել այն պահանջները, որոնք պէտք է ներկայացվեն Չինական կառավարութեան։ Այդ պահանջները բաղկացած են տասներկու կէտերից և համարվում են հիմնական ու անխախտելի։

Եւրոպական պահանջները կարելի է բաժանել չորս էական մասի՝ պատժել Չինացիներին եւրոպացիների վրա յարձակվելու համար, ապահովել եւրոպացիներին ապագայում, վարձատրել եւրոպացիների վնասները և հաստատել նոր առեւտրական յարաբերութիւններ եւրոպական պետութիւնների և Չինաստանի մէջ։

Եւրոպացիները պահանջում են, որ Տակուի և Պէկինի մէջ եղած ամրութիւնները քանդվեն և այնտեղ պահվի զանազան կէտերում եւրոպական զօրք խաղաղութիւնը ապահովելու համար։ Իսկ եւրոպական դեսպանատների եղած քաղաքամասը պէտք է ամրացնել լիակատար ապահովութեան համար։

Վարձատրութեան հարցը դրված է լայն կերպով։ Պէտք է վարձատրվեն թէ եւրոպական պետութիւնները, որոնք մեծ պատերազմական ծախքեր են արել և առեւտրական վնասներ կրել, այլ և մասնաւոր ընկերութիւններ և առանձին անհատներ։ Պէտք է վարձատրվեն նաև այն չինացիները, որոնք վնասվել են եւրոպացիներին համակրելու կամ եւրոպացիների մօտ պաշտօն ունենալու պատճառով։

Ապագայի համար եւրոպական պետութիւնները պահանջում են, որ ցունդլիամենը վերացվի և դիպլոմատիական յարաբերութիւնները կատարվեն եւրոպական եղանակով, իսկ առեւտրական յարաբերութիւնները որոշվեն յատուկ դաշնագիրներով։

Ի՞նչ կը պատասխանի Չինաստանը եւրոպական պետութիւնների այս կտրական պահանջներին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

(Նամակ Մօսկվայից)

—

Դեկտեմբերի 3-ին, կիրակի երեկոյեան, Մօսկվայի աշնուականների ժողովարանի դահլիճում տեղի ունեցաւ հայկական սովորական երեկոյթը՝ յօգուտ Մօսկվայի համալսարանի չքաւոր հայ ուսանողների։ Երեկոյթին մասնակցում էին՝ մասնաւոր օպերայի երգչուհիներ՝ տ. Բոստօվցեվա եւ օր. Պերլովա, հայ երգիչ պ. Ն. Շահլամեան, մասնաւոր օպերայի երգիչներ՝ պ.պ. Բօչարով եւ Մուտին, սիրողների երգեցիկ խումբը կայսերական թատրոնների խմբապետ պ. Բօգուսլավի առաջնորդութեամբ եւ երաժշտական խումբը պ. Լիտվինովի ղեկավարութեամբ։

Երեկոյթի երաժշտական մասում երաժշտական խումբը կատարեց, ի միջի այլոց, պ. Իպպոլիտով-Իվանովի «Կովկասեան էսքիզները», երգեցիկ խումբը «Հաբրբան», «Բամբ որոտանը», «Արեւն ելաւ, զէյթունցիներ», իսկ սոլիստները առանձին կամ երգեցիկ խմբի հետ երգեցին, ի միջի այլոց, «Դարեր եկան» Ա. Ծատուրեանի, երաժշ. Լ. Նազարեանի, եւ «Եթիմի սէրը» Ա. Ծատուրեանի, երաժշտ. Ն. Շահլամեանի։

Ապա ասիական թառի, ջութակի, դափի եւ զուռնայի նուագածութեամբ տեղի ունեցան կովկասեան պարեր՝ ա) լեզգինկա, որ շնորհալի պարեց օր. Զուրի եւ բ) կինտօուրի, որ շատ աջող պարեց պ. Լիսինեան։ Ծափահարութիւններին՝ վերջ չը կար։ Ամենից վերջը տեղի ունեցան եւրոպական պարեր, որոնք տեւեցին մինչեւ առաւօտեան ժամի 3-ը։

Փոքր դահլիճը, որի մուտքի դիմացի պատը ներկայացնում էր «Գիշերը կովկասեան ափերում»—Այվազովսկու նկարից, թողնում էր թովիչ տպաւորութիւն իր մեղմ լուսաւորութեամբ. նրա ձախ կողմը դրված էր հանճարեղ նկարչի կիսարձանը նոյնպէս ազօտ լուսաւորված։ Դահլիճի աջ պատը ներկայացնում էր հռչակաւոր նկարչի շատրվանը Թէոդոսիայում, ձախ պատը՝ Այվազովսկու տունը Թէոդոսիայում։

Մեծ դահլիճի յատակը եւ քիօսկները այնպէս ճաշակով էին զարդարված գորգերով եւ թանդագին կտորներով, որ կարծես արեւելեան խանի մի պալատ լինէր։ Մեծ դահլիճի զարդարանքը կազմում էին՝ «Անիի աւերակները եւ Բագրատունեաց պալատը» բեմի մուտքի պատի վրա։ Եկատերինեան դահլիճը զարդարված էր ծաղիկներով եւ ծառերով. իսկ մեծ դահլիճի ձախ կողմի ներքին դատիկոնում (ярусъ) դրված էր Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրի պատկերը չքով զարդարված։

Գլխաւոր երգիչներին եւ երգչուհիներին, որոնք յաճախակի բեմ էին կանչվում, տրվեցին պսակներ։

Երգեցիկ խումբը կրում էր Ախալցխայի հայ կանացի զգեստ։ Երեկոյթը գրաւել էր բազմաթիւ հասարակութիւն, որն ուրախ տրամադրութեան տակ գնաց տուն։

Խ. Բաբայեանց

ՆԱՄԱԿ ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ

—

Նոյեմբերի 7-ին

Նոյեմբերի 5-ին այստեղի հայոց դպրոցի դահլիճում կայացաւ ծխականների ընդհանուր ժողով՝ ընտրելու մի նոր երէցփոխ, իր պաշտօնավարութիւնը լրացրած պ. Ս. Շէնդրէնի փոխարէն։ Ժողովականների օրինական թիւը լրացել էր, բայց դեռ եկեղեցու աւագ քահանան չը կար. նա բացակայում էր ժողովից, զբաղված լինելով եկեղեցում պսակ կատարելու գործով։ Ստուար թիւով հաւաքված ժողովականները, աւագ քահանայի բացակայութեան պատճառով, խնդրեցին պ. Յակոբ Քուշնարեանին նախագահել ժողովին։ Որոշվեց ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ կատարել։ Քուէարկութեան առաջարկվեցին նախկին երէցփոխ պ. Ս. Շէնդրին, Յ. Մազլումեան, Յ. Քուշնարեան։ Առաջին երկուսը քուէարկվելուց հրաժարվեցին, իսկ պ. Յ. Քուշնարեան, օգտվելով ժողովի բազմամարդութիւնից, յայտնեց, որ, երէցփոխանական պաշտօնը ստանձնելու համաձայնութիւնը տալուց առաջ, հարկաւոր է համարում տեղեկացնել ժողովին, որ եկեղեցին պարտքի տակ է, նրա նիւթականը խիստ աննախանձելի է, որպիսի անել վիճակից դուրս գալու համար առաջարկում էր հոգեւորականներին եկեղեցուց տրվող բնակարանի վարձը դադարեցնել,—հոգեւորականներին, որոնք առանց դրան էլ շատ լաւ արդիւնք ունեն ժողովրդից։ Պարոնը համաձայնվում էր երէցփոխանական պաշտօնի համար քուէարկվելու միայն այն դէպքում, երբ հոգեւորականներին բնակարանի վարձը դադարեցնելու վերաբերութեամբ արած առաջարկութիւնն ընդունվէր։

Ժողովականները, դժգոհ լինելով երկու քահանայի անվերջ խռովութիւններից, վէճերից ու կռիւներից, մանաւանդ ժամերքս եկեղեցում տեղի ունեցածից, լսելով պ. Յ. Քուշնարեանի առաջարկութիւնը եւ նկատի առնելով եկեղեցու իսկապէս նիւթական խիստ անճոռնի դրութիւնը, հաւանութիւն տուին յիշեալ առաջարկութեանը եւ որոշեցին այս տարվայ դեկտեմբերի 1-ից դադարեցնել հոգեւորականներին բնակարանի վարձ տալը, իսկ մինչեւ այն ժամանակամիջոցը եկեղեցու վրա ապառիկ մնացածը լրիւ տալ նրանց։

Այնուհետեւ տեղի ունեցաւ երէցփոխանական ընտրութիւն։ Զայների պատկառելի մեծամասնութեամբ ընտրվեց իրաւաբանութեան կանդիդատ պ. Յ. Քուշնարեանը։ Որովհետեւ երկու քահանայի միջեւ ծագած խռովութիւնների պատճառը գլխաւորապէս արդիւնքի անհաւասարութիւնն է, ուստի եւ ժողովում հարց բարձրացաւ հոգեւորականների նիւթական վիճակը կանոնաւորելու, ոռճիկ նշանակելով։ Յիշեալ որոշումը իրականացնելու համար, ընդհանուր ժողովն ընտրեց 7 հոգուց բաղկացած մի մասնաժողով։

Այնուհետեւ պ. նախագահը, յայտնելով ժողովին, որ դեկտեմբերին լրանում է աղքատների հոգաբարձութեան անդամների պաշտօնավարութեան ժամանակը, առաջարկում էր հէնց այժմ ընտրել նոր անդամներ, ասելով, որ այսպիսի բազմամարդ ժողովներ շատ հազիւ եւ մեծ դժուարութեամբ են գումարվում։

Ժողովը, համաձայնվելով պ. նախագահի առաջարկութեանը, անցաւ թեկնածուների քուէարկութեանը։ Հոգաբարձութեան դուրս եկող բոլոր անդամներն էլ, այն է՝ պ.պ. Խ. Քելեան, Յ. Սելինեան, Վ. Խորասանեան, Յ. Բուռնազեան վերընտրվեցին, իսկ հոգաբարձութեան անդամ պ. Յ. Քուշնարեանի տեղ, որ երէցփոխան ընտրվելով անցաւ, համաձայն կանոնադրութեան, ի պաշտօնէ հոգաբարձու համարվածների կարգը, ընտրվեց նոր անդամ պ. Յ. Մազլումեանը։

Ի վերջոյ, կարդացվեց Ղ. Ք. Յովսէփեանի ընդհանուր ժողովին ուղղած գրութիւնը, որով ինչ որ մերկացումներ էին առաջ բերված աւագ քահանայի գործունէութիւնից։ Յիշեալ գրութիւնը ժողովը քննութեան նիւթ դարձնելը աւելորդ համարեց, որոշեց յանձնարարել երէցփոխին վերահասու լինելու նրանում յայտնվածի ճշմարտութեանը եւ հետեւանքի մասին զեկուցանել։

Ընտրող

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆԴԻՑ

I

Դեկտեմբերի 1-ին

Հարսանիքների սեզօնը սկսված կարելի է համարել Դերբենդում։ Այդ առիթով թոյլ ենք տալիս մեզ մի քանի նկատողութիւն անել։

Որքան յայտնի է, լուսաւոր ազգերի մէջ պսակը կամ ընտանիք կազմելը բարոյական մի մեծ պարտք է, որ պէտք է երկու կողմից էլ սրբութեամբ կատարվի։ Իսկ մեզանում, հայերիս մէջ, այդ լուրջ հարցի վրա նայում են լոկ խանութպանային աճուրդի տեսակէտից։ Նոյն իսկ ինտելիգենտ համարվող հայ մարդն էլ, այս վերջին, աւելի քան ստոր տեսակէտով է առաջնորդվում ընտանեկան կեանք կազմելու հարցում։ Շատ սովորական բան է տեսնել մեզանում, որ 40 կամ 45 տարեկան մի տղամարդ պսակվում է 15—16 տարեկան, մանկութեան տարիքից դեռ նոր ոտք փոխած, օրիորդի հետ, բաւական համարելով վերջինիս մի քանի հազարանոց օժիտը եւ անուշադիր թողնելով փոխադարձ սիրոյ զգացմունքի, տարիքի եւ մտաւոր զարգացման համապատասխանութեան հարցերը։

Յաւալի է, որ մեր հայ կեանքում այս հարցի մէջ էլ միայն եւ միմիայն մամոնան է առաջնակարգ դեր կատարողը։ Ե՞րբ պէտք է այդ անիծեալ մամոնան փոխարինենք վեհ դաղափարներով։

Եւա Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Կարս, դեկտեմբերի 5-ին

Ժողովրդի անբռնաբարելի, բայց բռնաբարված իրաւունքը, նրա վրդովված խիղճն ու արդար զայրոյթը, անարգված, վաճառքի հանած ճշմարտութիւնն ու արծաթի գնով տուած դաւաճանի համբոյրն է, որ հարկադրում է ինձ հրապարակ իջնել բարձրաձայն գոչելու ճշմարտութիւնը, թէեւ համոզված եմ, որ այդ էժան չէ նստելու ինձ։ Այսպիսով ցանկանում եմ ցնցել անտարբերների խիղճը, որպէս զի պաշտպան հանդիսանալով հասարակութեան անբռնաբարելի իրաւունքներին «ձեռքերնիդ հեռու» գոչեն նրանց, որոնք սուր հոտառութեամբ փայլուն մետաղը նկատելիս՝ եւ իրաւաբան են, եւ իրաւատէր, եւ իշխանաւոր, եւ եռանդոտ ու գործունեայ, մինչդեռ այլ հանգամանքներում՝ մեռած դիակ։

Խօսքս Կաղզուանի եկեղեցու չինութեան մասին է, որն իր ստացած սուր կերպարանքով եւ դառն հետեւանքներով՝ անջնջելի սեւ հետք պիտի թողնէ հայութեան, եթէ օր առաջ օրինաւոր լուծումն չը ստանայ։ Պատմեմ գործի ամբողջ էութիւնը։

Դեռ 1886 թուին հիմնարկվում է Կաղզուանի եկեղեցին հանգուցեալ Աղուանեան եպիսկոպոսի օրով, առանց յատակագծի հաստատութեան։ Պահելով մի դպրոց մօտ երեք հազարի բիւջէյով, ժողովուրդը մինչեւ 1892 թիւը բարձրացնում է հիմքից 10 արշին, պատրաստում 700 արշին կարմիր, 400 արշին սեւ եւ միջին շարքի համար հարկաւոր քարը, մի քանի խորանարդ սաժէն աւազ, մօտ երեք հազար պուդ կիր եւ ուզում է շարունակել շինութիւնը, սակայն մարմնաւոր իշխանութեան կողմից պահանջվում է դադարեցնել այն՝ մինչեւ յատակագծի օրինաւոր հաստատութիւնը

եւ այսպիսով շինութեան գործը կանգ է առնում։

Ցատակագիծը հոգեւոր իշխանութեան շնորհիւ տարիներով մնում է դիւանատներում եւ հազիւ հաստատվում ու ստացվում 1899 թվին։ Դեռ 1897 թվին Կաղզուան եղած ժամանակ պ. Զաքար Զանփոլադեանը խոստանում է իր միջոցներով շարունակել շինութիւնը, բերել է տալիս մի քանի կոր փայտ, Շիրակի գիւղացիներին յանուն եկեղեցւոյ ձրիաբար փոխադրել է տալիս շինութեան քարի մի մասը եւ այդ պատճառով էլ իմ կողմից ոչ մի առաջարկութիւն այլ եւս չէ լինում ժողովրդին եկեղեցու շինութեան վերաբերութեամբ։ Վերջինս էլ՝ ինձանից լսելով, որ պ. Զանփոլադեանն է աւարտելու շինութիւնը՝ չը նայելով դէպի այդ պարոնը տածած թերահաւատութեանը, ուզում է հաւատալ լսածներին։

Այսպէս եւ մնում է մինչեւ այս տարվայ փետրվար ամիսը, երբ պարոնը գալիս է ինձ մօտ եւ լսելով ինձանից, որ, կամաբներն երկաթով եւ շաղախով (ցէմէնտով) շինելու դէպքում, հազիւ 6—8 հազար ծախսվի ամբողջ շինութեան վրա, խօսք է տալիս ձեռնամուխ լինել գործին։ Զը մոռանալով «երկաթը տաքտաք կը ծեծեն» առածը, ես անմիջապէս վարպետների հետ գնում եմ Կաղզուան եւ պայմանաւորվում, որ քարէ չարքը աւարտեն մինչեւ մայիսի վերջը, ստանալով իւրաքանչիւր քառակուսի սաժէնի համար 16 ռուբլի։ Ապա գտնվում է 862 ռուբլու երկաթեղէն եւ այսպիսով սկսվում է շինութեան պատրաստութիւնը։ Հասնում է չարքի ժամանակը՝ ապրիլ ամիսը եւ ես, պ. Զանփոլադեանի բացակայութեան պատճառով՝ հեռագրով կարգադրում եմ պատրաստել շաղախը, որպէս զի մեր Կաղզուան հասնելուն պէս սկսվի չարքը։ Վերադառնում է պարոնը, միասին գնում ենք Կաղզուան եւ դեռ տուն չը հասած, երբ կառքը կանգնեցնում ենք եկեղեցու մօտ եւ տեսնում է պատրաստած կիրը, սկսում է անտանելի հայհոյանք, որպիսին ընդհատվում է միայն այն ժամանակ, երբ յայտնում եմ, որ շաղախը իմ կարգադրութեամբ է պատրաստված։ Վերջապէս սկսվում է չարքը, բայց պարոնի տաբօրինակ բնաւորութեան եւ զեհկութեան շնորհիւ ոչ մի շաբաթ չէ անցնում առանց կռիւ եւ հայհոյանքի։ իսկ եկեղեցու շինութեան գործը մի քանի անգամ ընդհատվում է եւ հարկաւոր է դառնում ներկայութիւնս՝ մանաւանդ մարմնաւոր իշխանութեան գրաւոր պահանջից յետոյ։ Որմնադիրներից մի քանիսը անցած կռիւներից եւ հայհոյանքներից նախագուշակելով գալիքները, թողնում են գործն ու հեռանում։ Նոյն բանն են անում երկաթագործներից երկուսը, իսկ մշակներից եւ աշխատող զինուորներից շատերը՝ մի անգամ համն առնելուց յետոյ՝ այլ եւս չեն մօտենում եկեղեցու շինութեան գործին։

Շինութեան հէնց սկզբից ականատես ժողովրդի համբերութիւնը հատնում է, մանաւանդ պարոնի մի քանի անօրինակ սխրագործութիւններից յետոյ, որոնց պատճառով քրէական լուրջ գործ է սկսվում իրեն դէմ։ Նրա սանձանձարկութիւնը հասնում է գագաթնակէտին եւ եկեղեցու շինութեան վրա սկսվում է հոգու եւ հաւատի այնպիսի անպատկառ հայհոյանք, որ յետին մուրացիկն անգամ սարսռում է եւ սկսում հարցնել.—«հայր սուրբ, քանի՞ կարաս մեռոն պէտք է գործ դնէք մեր եկեղեցու օծման համար, որ նա իրօք եկեղեցի դառնայ»։ Վարպետներն էլ, ի նկատի ունենալով անցած դարձածը, երդվում են մի քարի վրա գաղտուկ փոքրագրել, որ եկեղեցին «զօռաչէն» է եւ այլն եւ այլն։ Տրտունջները հետզհետէ սաստկանում եւ ալիքանման տարածվում են ժողովրդի մէջ. պարոնի անօրինակ սխրագործութիւնից յետոյ վրդովվում են մանաւանդ կանայք եւ այդպիսով պատրաստվում է հրդեհի նիւթը։

Տեսնելով գործի ձգձգումն ու պարոնի անտանելի բռնակալութիւնը, ծխականների ժողովը՝ մի կերպ զսպելով իր զայրոյթը, խաղաղ կերպով, առանց մի վիրաւորական խօսք ասելու պարոնին, վճռում է մի պատգամաւորութեան միջոցով խնդրել նրանից, որ ինքնակամ կերպով իր վրա վերցրած եկեղեցու շինութիւնը որքան կարելի է շտապեցնէ, նախ՝ որովհետեւ եղած աղօթատունը փոքր է ու հին, եւ երկրորդ՝ այդպիսով յոյս է տածում վերջ դնել պարբերական հայհոյանքներին։ Պարոնը՝ փոխանակ խոհեմութեամբ պատասխանելու կամ կատարելու իր վրա վերցրած պարականութիւնը գործել վայել կերպով, թքում է թէ ժողովականների եւ թէ հոգեւորականների վրա՝ հազար ու մի հայհոյանքներ եւ կինոտոյական ածականներ տալով ժողովրդի ամենախաղաղ հաւատ վճռին. համբերութիւնը սպառվում է, պահանջվում է կայացնել երկրորդ ժողով, որի ժամանակ 200 ստորագրութեամբ որոշվում է հեռացնել այդ հերոսին հասարակական սուրբ գործից՝ վերժելով նրա զոհը եւ վճռվում է բաւարարութիւն տալ նրան՝ ծախսածների դէմ։

Որպէս փոխանորդ եւ վիճակիս եկեղեցիների շինութիւնների եւ վերանորոգութիւնների միակ հոգացող՝ պարտք եմ համարում յայտնել պարոնին հասարակութեան վճիռը ոստիկանութեան միջոցով եւ հոգեկան առանձին միխիթարութեամբ ժողովրդական գործը յանձնում եմ ժողովրդին։

Աղան չը տեսնված ապտակ է ստանում ամբողջ հասարակութիւնից. նրա բարեգործութիւնը մերժվում է, արհամարհանքի է հանդիպում նրա հարստութիւնը։ Սակայն նա կարողանում է գտնել չորս հոգի, որոնց եւ էջմիածին է ուղարկում, ինչպէս նկարագրված էր «Մշակում» լոյս տեսած թղթակցութիւնների մէջ։ Ես եւս կանչվում եմ էջմիածին կարեւոր բացատրութիւններ տալու։ Ժողովվում է ատեան, որը կարծելով՝ թէ այդ դրութիւնը հետեւանք է մեր միջի տարաձայնութեան, իսկ ժողովուրդը որպէս ոչխարների մի հօտ կը հաշտվի ամեն տեսակ դրութեան հետ, ուշադրութիւն չը դարձնելով 200 հոգու արցունքով ստորագրած հավախօսականի վրա, յորդորում են ինձ հաշտվել եւ յորդորել ժողովրդին, որ խաղաղվեն եւ թոյլ տան անօրինակ բարերարին՝ շարունակել եկեղեցու շինութիւնը։

«Ա՜յ Եղիշէ վարդապետ, ինչ բան ունիք, ջանը դուս գայ, թող չինէ ջանըմ,... մաղ քաշելը հալալ է, ժողովուրդն ինչ պէտք է ասի, ով չէ հայհոյում հոգի եւ հաւատ կամ վարպետի եւ բանւորի հետ այդպէս վարվում», լսում եմ դատաւոր կանչվածներից։ Տարօրինակ փաստաբանութիւն Աւետարանի աշակերտների կողմից։ Զսպում եմ ինձ, շատ բան չեմ ասում, որովհետեւ ասածներս զուր են անցնում. միայն կասկած եմ յայտնում, որ ժողովրդի վրդովված խիղճը մի փոխանորդի եւ մի աղայի հաշտութեամբ չի խաղաղվի։ Պարոնին կանչում են էջմիածին, հաշտեցնում են մեզ՝ մեծ յոյսեր ունենալով ժամոյների վրա, որպիսին չը ստանալով, մի երկուսը՝ առանց կարմրելու հրապարակով գանգատվում են, որ իրանք չարչարվեցին, իսկ աղահամբոյրն ուրիշը ստացաւ։ Վրդովված ժողովուրդը հեռագիրներով անընդհատ հարցնում է գործի դրութիւնը, բայց բոլորն էլ թողնում եմ անպատասխան, որպէս զի ոչ մի կասկածի տեղիք տուած չը լինեմ։

Փոխ. Կարսի վիճակի Ե. վ. Մուրադեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, դեկտեմբերի 10-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում կայացաւ Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը, որ գումարված էր խորհելու ընկերութեան գործերի մասին նրա փակման առիթով։ Ժողովվել էին 29 հոգի ընկերութեան անդամներից։ Նախագահում էր Ա. Քալանթար։ Վարչութեան ներկայացրած զեկուցումից երեւաց, որ ընկերութիւնը տպագրել է ներկայ 1900 թուականին 19 գիրք, որոնցից 16-ը արդէն լոյս են տեսել, իսկ երեքը դեռ տպարանումն են։ Ընկերութիւնը ունի 191 նոմեր հրատարակութիւն, որոնց արժէքը, գրքերի վրա նշանակված գներով, հասնում է մօտ քառասուն հազար ռուբլու։ Ընկերութիւնը ներկայումս կանխիկ դումարներ չունի իր դրամարկղում, բացի Ա. Պողոսեանցի նուէրից, որն ըստ պայմանի պէտք է վերադարձվի նուիրատուի լիազօրներին։ Ընկերութիւնը պարտ է մնացել թղթավաճառներին, հեղինակներին, տպարաններին մօտ 3000 ռուբլի։ Ընդհանուր ժողովը, լսելով վարչութեան զեկուցումը գործերի դրութեան մասին, այլ եւ Երեւանի թեմական դպրոցի հոգաբարձութեան գրութիւնը, որով նա խնդրում է յատկացնել ընկերութեան կայքը յիշած դպրոցին, կայացրեց հետեւեալ որոշումները. 1) նուիրել ընկերութեան ամբողջ կայքը Երեւանեան դպրոցին, 2) ընտրել լիկվիդացիական մի յանձնաժողով, հինգ հոգուց բաղկացած, որ վարչութեան հետ միասին մաքրէ ընկերութեան հաշիւները, հատուցանէ ընկերութիւն պարտքերը, ժողովէ ապառիկները եւ յանձնէ Երեւանի դպրոցի ներկայացուցիչներին մնացած կայքը. 3) յանձնել վարչութեանը՝ բանակցութեան մտնել Ա. Պողոսեանցի լիազօրների հետ վերադարձնելու նրա նուիրած գումարի մնացորդը եւ գրքերը. 4) լիքվիդացիայի համար ժամանակ նշանակել մինչեւ մարտի վերջը. 5) պարտաւորեցնել վարչութեանը եւ լիքվիդացիական յանձնաժողովին իրանց պարապմունքները վերջացնելուց յետոյ տալ հաշիւ լրագիրների միջոցով կամ առանձին հրատարակութեամբ, եւ յատկացնել ընկերութեան գրասենեկապետին մի տարվայ ռոճիկ։ Յանձնաժողովի անդամներ ընտրվեցին Յ. Ամիրխանեան Ս. Խարազեան, բժ. Ա. Խատիսեան, Ա. Մելիք-Այվազեան եւ Լ. Սարգսեան։ Ժողովը յայտնեց իր շնորհակալութիւնը ընկերութեան գործողներին։ Ժողովը սկսվեց 9 ժամին եւ վերջացաւ 11-ին։

—

Վերջապէս Մողնու ս. Գէորգ եկեղեցու եպէսկոպոսի ընտրութիւնը կայացաւ։ Մենք կաթողիկոսական ընտրութիւնների օրից մեր եկեղեցիներում այդպիսի բազմամարդ ժողով չէինք տեսել։ Ներկայ էին եկեղեցում իշխաններ, գեներալներ, դրամական տուզեր, բժիշկներ, փաստաբաններ եւ հասարակ ժողովուրդ։ Մենք պէտք է երախտագէտ լինենք իշխան Արսէն Բեհբութեանից, որ նա կարողացաւ մի այդպիսի հետաքրքրութիւն զարթեցնել հասարակութեան մէջ դէպի եկեղեցական գործերը։ Հոգեւորականութեան եւ քահանաների ջանքերը՝ սեւացնելու իշխան Արսէն Բեհբութեանին ապարդիւն անցան, եւ նա ընտրվեց ձայների ահագին մեծամասնութեամբ։ Քահանաները իրանց կողմից մոլորեցրել էին իշխան Ն. Արամելիքեանին, համոզելով նրան՝ թէ ժողովուրդը նրան է ուզում երէցփոխ ընտրել, եւ այդ պատճառով նրա թեկնածութիւնն էին դրել, եւ ահա մենք հանդիսատես էինք երկու իշխանների մրցութեանը՝ երէցփոխի պաշտօնի համար... Փառք Աստուծոյ, այս օրին էլ հասանք։ Այսպէս թէ այնպէս, շատ ուրախալի էր տեսնել ժողովրդի լուրջ վերաբերմունքը դէպի իր անկաշառ գործողները եւ նրա հետաքրքրքրութիւնը դէպի եկեղեցական-ծխական գործերը։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ այսօր, երեքշաբթի դեկտեմբերի 12-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում տեղի կունենայ այդ ընկերութեան ժողովը՝ քննելու ցուցահանդէսին վերաբերեալ մի քանի խնդիրներ, որոնց մէջ է եւ այգեգործական դպրոցում ցուցահանդէս չինելու հարցը։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, թէ Պետերբուրգի թէյի խոշոր ֆիրմաները Լօնդոնից տեղեկութիւն են ստացել այն բանի մասին, որ թէյի վերջին աճուրդի ժամանակ չինական թէյի գները այնտեղ շատ պակասել են եւ թէյի գնի ընկնելը շարունակվում է ու մշտական բնաւորութիւն ունի։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ վերջին ամսվայ ընթացքում զինուորագրական ատեանը երկու հարիւրից աւելի գանգատներ են մտել՝ քաղաքային եւ գաւառական զինուորագրական ատեանների անկանոն գործողութիւնների դէմ։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ չերամապահների եւ մետաքսավաճառների առաջին կովկասեան համաժողովը, որ կազմում է Կայսերական ռուսական այգեգործական ընկերութեան կովկասեան բաժինը, բացվելու է այս տարվայ դեկտեմբերի 17-ին։ Համաժողովի նկատերը տեղի կունենան կովկասեան չերամապահական կայարանի շինութեան մէջ։

—

«Новости» լրագիրը հաղորդում է, որ ռուսաց սինոդը եկող տարի տասը հազար ռուբլի է տալու հոգեւոր միսսիան պահպանելու համար Պարսկաստանի Ուրմիա քաղաքում։

—

Ներկայ 1900 թուի դեկտեմբերի 28-ին, 29-ին եւ 30-ին կը կայանայ վիրաբոյժների (խիրուրգների) առաջին համառուսական համագումար ժողովը Մոսկվայում, Մոսկվայի բժիշկների ժողովարանի շինութեան մէջ։

—

Մոսկվայի վաճառականների մէջ կազմակերպվել է մի ակցիոնէրական ընկերութիւն, որը կամենում է գնել Կրիմի Գուրզուֆ կալուածքը 3,200,000 ռուբլով։ Ընկերութիւնը, «Нов. Время» լրագրի ասելով, նպատակ ունի օրինակելի կուրորտ հիմնել Գուրզուֆում։

—

Պէչորա գետի աւազանում գտած նաւթահորերը գտնվում են Ուխտա գետի շրջականերում։ Այդ տեղից ստացված նաւթի քննութիւնը ցոյց տուեց, որ 35-ից մինչեւ 40% էրոսին է տալիս։ Նաւթը ձեռք է բերված աննշան խորութիւնից։ Ուխտա գետը նաւագնաց է եւ ներկայացնում է բնական էժան ճանապարհ նաւթ արտահանելու համար դէպի Սառուցեալ ովկիանոսը։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Օր չէ անցնում, որ չը լսենք թէ այս ինչ կամ այն ինչ դրասենեակը կողոպտել են։ Դեռ մօտ ժամանակներս մտել էին Տէր-Յակոբեանի դրասենեակը եւ գողացել ամբողջ կասսան. մի քանի օրից յետոյ միայն հանելով փողերը, թղթերը եւ մուրհակները, գցել էին կասսան Բալախանի տանող խճուղու մօտ, «Մօլոկանակի պօսեօլոկ» կոչվող տներից ոչ հեռու։ Դրանից մի քանի օր անցած՝ մտնում են Բալախանի ընկերութեան դրասենեակը, որ գտնվում է քաղաքի ամենաբանուկ տեղում, բայց չը կարողանալով կոտրել կասսան, թողնում են մի նամակ, որի մէջ ցաւ են յայտնում, որ չարչարվելով ժամի 12-ից մինչեւ 6-ը, ոչինչ չը կարողացան տանել։ Դեկտեմբերի 8-ին գիշերը մտնում են Բալախանի Կասպեան ընկերութեան դրասենեակը կասսան կոտրելու, բայց որովհետեւ երկար չարչարվելով չեն կարողանում կոտրել, մտնում են հարեւան սենեակը, որտեղ քնած է լինում գանձապահը, պահանջում են, որ յանձնէ իրանց բանալին։ Որովհետեւ վերջինս դիմադրում է, սպանում են նրան եւ ստիպում կընոջը, որ նա վերցնէ բանալիքը եւ բանայ կասսան. այդպէս էլ անում է խեղճ կինը։ Ասում են, որ կասսայում եղել է մօտ 6000 ռուբլի փող։ Զը նայելով, որ այսպէս յանդուգն աւազակութիւններ են կատարվում յաճախ, ոստիկանութիւնը դեռ մինչեւ օրս չէ կարողանում գտնել նրանց հետքը»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 28-ին մեռաւ քաղաքիս հարուստ անձինքներից մէկը, Պետրոս աղա Շէյխեանցը, որ մի քանի անգամ հասարակութեան կողմից ընտրվել է քաղաքիս «դեպուտատ»։ Հանգուցեալի ժառանգները, իրանց հօր յիշատակը յարգելով, խոստացան տալ նոր շինվելիք եկեղեցուն—200 ռուբլի, գրադարան ընթերցարանին—50 ռ. եւ տեղական աղքատներին բաժանելու 30 ռուբլի»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Ամբողջ նոյեմբերը անցաւ մեզանում մեծ մասամբ տաք, արեւով. դաշտերը տեղ տեղ կանաչել են»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Մի խումբ երիտասարդներ պատրաստվում են դեկտեմբերի 31-ին պարահանդէս կազմակերպել, որից ստացած արդիւնքը յատկացնելու են գրադարան-ընթերցարանին։ Պարահանդէսից առաջ ներկայացնելու են երկու վոդեվիլներ։ Ցանկալի է, որ հասարակութիւնը չը խնայէր իր լուման այդ օրը, որով ազատած կը լինէր փակվելուց գրադարան-ընթերցարանը, քաղաքումս եղած միակ ժողովրդակրթական հիմնարկութիւնը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կապշտադից ստացված վերջին տեղեկութիւնները, ի միջի այլոց, հաղորդում են, որ Կապի գաղթականութեան պարլամէնտի անգամ Պրեսօրիուս դիմել է մի յայտարարագրով Կապի աֆրիկանդէրներին, որի մէջ ասված է հետեւեալը. «Երկու հանրապետութիւնների բօէրները մեր արիւնն են եւ մեր մարմինը, եւ մենք պէտք է մի բան ձեռնարկենք նրանց դրութիւնը բարւոքելու համար։ Ես կապիտան էի—շարունակում է Պրեսօրիուս—բազուտօների դէմ մղած պատերազմում եւ անձամբ կարող եմ վկայել, որ մենք սեւամորթների կանանց եւ երեխաների հետ չէինք վարվում այնպէս, ինչպէս անգլիացիները վարվում են այժմ բօէր կանանց եւ երեխաների հետ։ Մտելլենբոշում, աֆրիկանդէրների ամենանշանաւոր կենտրոնում, կազմվել է յանձնաժողով պրոֆէսօրներից եւ մի քանի մինիստրներից՝ օգնութիւն հասցնելու այրիներին, որբերին, վիրաւորվածներին, գերիներին եւ այն ազարակատէրերին, որոնք կորցրել են ամեն ինչ։ Բայց մանաւանդ ժողովի նպատակը միայն հասարակ բարեգործութիւնը չէ։ Այդ մանաւանդ ժողովը յոյս ունի միացնել աֆրիկանդէրներին համերաշխ եւ միաբան աշխատելու, գրգռել նրանց հայրենասիրութիւնը եւ գրգռել մաքառելու անգլիական բէժիմի դէմ։

—«Morning Leader» լրագիրը խօսելով Կապի աֆրիկանդէրների շարժման մասին, հարցնում է, թէ վերջապէս ե՞րբ պէտք է կանգ առնի այն յիմարութիւնը, որ նման է Վէյլէրի յիմարութեանը Կուբա կղզու վրա։ «Մենք կորցրինք արդէն—ասում է այդ լրագիրը—85 միլիոն ֆունտ ստերլինգ, մենք կորցրինք արդէն 72,000 մարդ, այսուամենայնիւ մեր դէմ յանդիման կանգնած է մի թշնամի, որ այժմ աւելի եւս քաջ է, քան երբ եւ իցէ։ Մենք տեսնում ենք, թէ ինչպէս յուզվում են ամեն տեղ աֆրիկանդէրները, ինչպէս ապստամբութիւն է պատրաստվում, իսկ կառավարութիւնը ոչ մի վճռողական միջոցներ ձեռք չէ առնում այդ վտանգաւոր դրութիւնից դուրս գալու համար։ Մենք կրկնում ենք, որ եթէ դիմադրական կուսակցութիւնը չի սկսի գործել վճռողաբար, եւ եթէ կառավարութիւնը չի համաձայնվի այնպիսի վճռի, որ մի ազնիւ կօմպրոմիս լինի, մենք կենթարկվենք հարաւային Աֆրիկան իսպառ կորցնելու վտանգին, ինչպէս սպանիացիները կորցրին Կուբա կղզին»։

—Սուլթանի ծննդեան օրը, նոյեմբերի 25-ին, սովորական հանդէսով կատարվեց։ Սուլթանին իրանց հաւատարիմ հպատակութեան զգացմունքները յայտնեցին եւ շնորհաւորեցին եգիպտական խէդիվը, բոլգարական իշխանը, Մէկկայի էմիրը, կ. Պոլսի եւրոպական դեսպանները, նահանգապետները, պատրիարքները եւ այլն։ Մի քանի հազար սօֆտաներին, ուլէմներին եւ մոլլաներին Ստամբուլում, Միւլքիէ, Սուլթանիէի եւ Իդադիէի դպրոցների աշակերտներին դրամական

պարգեւներ եւ զանազան մրգեղէններ բաժանվեցին սուլթանական խոհանոցից։ Կովկասից, Բօսնիայից, Ռումինիայից եւ Արեւելեան Ռումելիայից կ։ Պօլիս եկած մահմեդական գաղթականների ընտանիքներին տրվեցին ոչխարի մսի, իւղի, բրնձի եւ հացի առատ պաշարներ։ Կենտրօնական բանտից, ուր դեռ 1894 թուից բանտարկված են 2000-ից աւելի հայեր, սուլթանի հրամանով արձակվեցին 50 տղամարդիկ եւ 5 կանայք, որպէս պատժի $^{2}|_{3}$ ժամանակամիջոցը լրացրած անձանց։

—Թիւրքայ լրագիրները հաղորդում են, որ հայարնակ կենտրօններում, ինչպէս եւ Թիքիրդաղում—Եւրօպական Թիւրքիայում եւ Մարաշում—Կիլիկիայում, սուլթանի իրաւունքով հրամայված է զօրանոցներ կառուցանել հեռաւոր եւ հեծելազօր զօրքերի համար։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

7 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված են Բարձրագոյն հրամաններ—1) ազնուականների պետական հողային բանկի $3^{1}|_{2}$%-աբեր գրաւաթղթերի արձակման մասին 100 միլիոն ռուբլու արժողութեամբ, 2) գիւղացիական հողային բանկի պետական 4%-աբեր վկայաթղթերի արձակման մասին 35 միլիոն ռուբլու արժողութեամբ։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Կապի կառավարութեան ազդարարութիւնում ասված է, թէ այն բօէրները, որոնք ներս են խուժել Բենօստերգուկով, այժմ չեն կարող առաջ գնալ, որովհետեւ Ստէյնսբուրգում ուժեղ քաղաքապահ զօրաբաժին կայ։ Նրանք այժմ կարող են շարժվել միայն մեծ դժուարութեամբ։ Վերջին անգամ նրանց տեսել են բօէրական լեռներում Ստէյնսբուրգի եւ Վէնտէրսդադի միջեւ։ Զանդրիֆոն անցնող բօէրների թիւը 2,000 է հաշուվում։ Ըստ երեւոյթին, նրանք կամենում էին անցնել դէպի Կոլսբէրգ, բայց երբ նրանց դէմ ուղարկվեցին զօրքեր, նրանք չկռեցին իրանց ճանապարհը դէպի Ֆիլիպպստաուն եւ դեկտեմբերի 6-ին գրաւեցին Նրան։ Մինչեւ այժմ տեղի են ունեցել միայն թեթեւ ընդհարումներ, որովհետեւ բօէրները նահանջեցին բրիտանական զօրքերի առաջ։ Բենտերսդօրպում նրանք գերի վերցրին բերդապահ խումբը, որ բաղկացած էր 20 մարդուց։ Գամէլֆոնտէնում, Կոլսբէրգի շրջանում, բօէրները պահանջեցին քաղաքապահներից անձնատուր լինել, բայց մերժումն ստանալով, կռիւ սկսեցին, որ տեւեց մի քանի ժամ. վերջապէս յարձակվողները մեծ կորուստով յետ մղվեցին։ Մի քանի շրջաններում հրատարակված է պաշարման դրութիւն։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Կոլսբէրգում մօտ օրերումս պէտք է կայանար զանազան դաւաճանների դատը, բայց որովհետեւ բօէրները մօտեցել էին Կոլսբէրգին այնքան, որ 7 անգլիական մղոն էր մնացել միայն նրանց եւ դատարանի շինութեան միջեւ, ուստի դատը պէտք է կայանայ մի աւելի ապահով տեղում։ Դատարանի անդամները եկան Կապշտադտ։

ԿԱԼԿՈՒՏՏԱ։ Պաշտօնական լրագրում յայտարարված է, որ Կէմմս նշանակվում է ռուսական հիւպատոս Բօմբէյում։ Ռուսաստանը առաջին անգամ հիւպատոսական ներկայացուցիչ կունենայ Հնդկաստանում։

ՇԱՆԳՀԱԻ։ Այստեղից մինչեւ Ցինտաու ծովային հեռագրաթել չինվեց։

ԲԵՐԼԻՆ։ Վալդերզէէ հաղորդում է Պեկինից, թէ Գիւնդէլի՝ Շանգհայգուանից դուրս եկած զօրաբաժինը դեկտեմբերի 1-ին Պուռնեալինի մօտ, կայսերական արեւելեան դամբարաններից ոչ հեռու, աջող կռիւ ունեցաւ «Մեծ-բռունցքների» դէմ, որոնք կորցրին 15 մարդ սպանված եւ 3վ իրաւորված։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Դեկտեմբերի 7-ին Պեկինից ստացված հեռագիրը հաղորդում է, թէ դեսպանների երէկվայ խորհրդակցութիւնը շատ աղմկալից է եղել, որովհետեւ նրանք կամենում էին իմանալ, թէ ով է հաղորդում չինացիներին այն, ինչ որ ամեն մի դեսպան պարտաւոր է գաղտնի պահել։ Լի-Խունգ-Զանգ միշտ երկու ժամից յետոյ իմանում է ամեն բան, ինչ որ տեղի է ունենում դեսպանների իւրաքանչիւր նիստում։ Միացած յայտագիրը կը յանձնվի Լի-Խունգ-Զանգին եւ Ցինին, երեւի, շաբաթ օրը եւ կը խնդրվի հնարաւոր եղածին չափ շուտ պատասխանել։ Յայտագիրը կը կազմվի ֆրանսերէն լեզուով։ Կոնջեր եւ Սատօու դեսպանները կը միացնեն յայտագրին նրա անգլիական թարգմանութիւնը. կաւելացնվի նաեւ չինական թարգմանութիւնը։

ԴԱՐՄՇՏԱԴՏ։ Երկրորդ պալատը 22 ձայնով ընդդէմ 22-ի մերժեց Կէլէրի եւ Լանգբսդօրֆի առաջարկութիւնը միջնորդ դատարանի մասին Անգլիայի եւ բօէրական հանրապետութիւնների մէջ։ Նախագահի ձայնը վճռող նշանակութիւն ունեցաւ։ Յօգուտ առաջարկութեան ձայն տուին բոլոր հակահրէականները եւ սոցիալ-դեմօկրատները, առաջարկութեան հակառակ—ազգային ազատամիտների մեծ մասը եւ միւսները։ Կառավարութեան ներկայացուցիչները հեռացան դահլիճից այդ հարցի մասին վիճաբանութիւններ սկսելուց առաջ։

ԲԵՐԼԻՆ։ Բանկիր Շտէրնբերդ դատապարտված է $2^{1}|_{2}$ տարվայ բանտարկութեան եւ պատուազրկութեան 5 տարով։

ԲԼՈՒՄՖՕՆՏԷՆ։ Դէվէտ անցնելով Տարանչու-Լէգիբրանտ երկաթուղային գիծը, ուղեւորվեց դէպի Ֆիկսբուրգ։ Նրա բոլոր կորուստները դէպի Կապի գաղթականութեան սահմանները ձեռք առած արշաւանքի մէջ հաւասար են 50 սպանվածի եւ 100 գերի ընկածի. բացի սրանից նա կորցրել է 3 թնդանօթ եւ չատ ռազմամթերք։

9 դեկտեմբերի

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտերի գործակալութեան թղթակիցը դեկտեմբերի 3-ին Տարանչուից ուղարկած մի հեռագրի մէջ նկարագրում է Դէվէտի նահանջը եւ Տարանչուի զօրագնդի պատառումը, երբ նա տեսաւ, որ խուժումը դէպի Կապի գաղթականութիւնը անյուսալի է։ Թղթակիցն ասում է, թէ տեսարանը հիանալի էր, երբ բօէրական զօրքը, մօտ 2,500 մարդ, Սպրինգանէկի միջով սկսեց վազեցնել ձիերը լայն բաց արած մարտագծով։ Զարմանալի քաջութիւններ գործեցին Շտէյն եւ Պիտ Ֆուրիէ, երբ նրանք ղեկավարում էին յարձակումը անգլիական թնդանօթների եւ հրացանների անընդհատ կրակի տակ։ Աջողութիւնը կատարեալ էր, թէպէտ եւ բօէրները կորցրին երկու թնդանօթ եւ 25 գերի։

ԲԵՐԼԻՆ։ Վարդերզէէ հաղորդում է, թէ Գիւնդէլի զօրաբաժինը Պեկին հասաւ դեկտեմբերի 7-ին։

ՏԵԱՆՋԻՆ։ Պրինց Ցինի թարգմանը հաղորդում է, թէ կայսրը առանց կայսրուհու դուրս եկաւ Սինանֆուից դեկտեմբերի 6-ին՝ Պեկին ուղեւորվելու նպատակով։

ԻՕՀԱՆՆԷՍԲՈՒՐԳ։ Բօէրները երեքշաբթի օրը, գիշերով, յարձակումն գործեցին Զուրֆոնտէնի վրա, երկաթուղային գծի ուղղութեամբ, Իօհաննէսբուրգի եւ Պրետօրիայի մէջտեղում, բայց յետ մղվեցին։ Անգլիացիները կորուստ չունեցան։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Կարճ ժամանակից յետոյ Ստելլենբոշ, Վօրչեստեր եւ Վէլինգտոն շրջաններում կը յայտարարվի պաշարման դրութիւն։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Երկաթուղային գծի վրա, Գոուտկրաալի մօտ, բօէրները, որոնք գտնվում էին Դէաարի հիւսիսակողմում, յետ են մղված իօմանրիների ոյժերով։ Անգլիացիները կորուստ չունեցան։ Բօէրները ուղեւորվեցին դէպի արեւմուտք։ Մի ուժեղ պահակախումբ գնաց դէպի Ֆիլիպպստաուն, որպէս զի հաւատիանայ, թէ գրաւված է դեռ եւս այդ քաղաքը բօէրներից։ Բօէրները Գոուտկրահալում պայթեցրին ջրմուղը եւ քանդեցին հեռագրաթելը։ Բօսմիդի մօտ անձրեւը աւերեց երկաթուղու գիծը 150 եարդ տարածութեամբ։

ԻՕՀԱՆՆԷՍԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի 6-ին Ֆրէնչ ընդհարումն ունեցաւ բօէրների հետ, երեւի, հէնց նրանց հետ, որոնք յարձակվել էին Կլէմէնսի վրա։ Նա դուրս քշեց նրանց այն դիրքերից, որոնք գտնվում էին 16 մղոն դէպի հիւսիս Կրիւգէրսդօրպից։ Բօէրները, որոնք 2,500 հոգի էին, ունէին հինգ թնդանօթ։ Կորցնելով 50 սպանված, նրանք յետ քաշվեցին նշանաւոր անկարգութեամբ, որ վերջում սարսափի փոխվեց։ Անգլիացիներից վիրաւորված են 14 հոգի։

ԼՕՆԴՕՆ։ Զինուորական մինիստրութիւնը յայտարարում է, թէ ի նկատի առնելով իրերի ընդհանուր դրութիւնը հարաւային Աֆրիկայում, վճռված է ուղարկել առաջիկայ շաբաթ 800 հեծեալ հետեւակներ։ Հեծելազօրքի երկու գունդ կուղարկվեն իսկոյն, հէնց որ տեղափոխող շոգենաւը պատրաստ կը լինի։ Մի եւ նոյն ժամանակ Նոր-Զելանդիայի աւստրալիացիներին առաջարկված է տալ հեծեալների էլի մի զօրաբաժին։

ՇԱՆԳՀԱԻ։ Զժանչժիդուն հաղորդեց, թէ նա ստացել է կայսերական հրաման, որով հրամայվում է բանալ Վուչժօու նաւահանգիստը օտարերկրեայ առեւտրի համար։ Լրագիրների տեղեկութեամբ, մահմեդականների ապստամբութիւնը կանսուում լուրջ չափեր է ընդունում։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Թեմական ուսումնարանում գողացուած է դպրոցական դրամագլուխը՝ բաղկացած 47,000 ռուբլի արժողութեամբ տոկոսաբեր թղթերից։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Լուրեր են պատում, թէ Իօհաննէսբուրգի իշխանութիւնների կողմից քիչ ժամանակ առաջ ձեռնարկված միջոցների պատճառով ուտելեղէնի պաշարեղէն մատակարարելու եւ զինուորագրութեան վերաբերմամբ, օտարերկրեայ հիւպատոսները, իրանց կառավարութիւններից ստացած հրամանների զօրութեամբ, եւ ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ իրանց պետութիւնների հպատակները ենթարկվում են յիշված միջոցների ազդեցութեան, բողոք յայտնեցին իշխանութիւններին։ Դեռ եւս վճիռ չէ կայացել։

ՆԻԻ-ԵՕՐԿ։ Պեկինից դեկտեմբերի 8-ին այստեղ ուղարկած հեռագիրը հաղորդում է, թէ Լի-Խունգ-Զանգի առողջական վիճակի մասին լուրջ երկիւղ են կրում։ Բայց եւ այնպէս ասում են, որ այսօր նրա դրութիւնը լաւ է։

ՊԱՐԻԶ։ Զօլա յանուն Լուբէի ուղղած մի նամակում բողոքում է ներման օրէնքի դէմ։ Նա այդ օրէնքը անուանում է վախկոտութիւն եւ անզօրութիւն։ Զօլա կրկնում է այն մեղադրանքները, որ յայտնել է 1898 թուի յունվարին գրած նամակով Դիւ-Պատի-դէ-Կլամի, Մերսիէի, Բիլիօի, Բուադէֆրի, Գոնզի, Պելիէի եւ զինուորական դատարանի անդամների դէմ։ Նա շեշտում է, որ վճռաջինջ ատեանի քննութիւնը եւ այլ նշանաւոր անցքեր լիովին հաստատեցին նրա մեղադրանքները։ Իրաւեղրակացութիւն նա յայտնում է, որ նա հնար եղածին չափ բարեխղճօրէն կատարել է իրան վիճակված խնդիրը—օգնել ճշմարտութեան յաղթանակին։ Այժմ նա վերադառնում է իր գրքերին յուսալով, որ մօտիկ ապագան կը բերէ վերջապէս իր հետ ճշմարտութիւն եւ արդարութիւն։

ՇԱՆԳՀԱԻ։ Կուպօնը, որի ժամանակամիջոցը երէկ լրացաւ, վճռված է։

10 դեկտեմբերի

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ում հրատարակված է պետութիւնների միացեալ յայտագրի պատճէնը, որ ստացված է Պեկինից։ Նա սկսվում է երկար նախաբանով, որի մէջ դատապարտվում են քիչ ժամանակ առաջ տեղի ունեցած չարագործութիւնները, որպէս չը լսված յանցանքներ, որպէս ոճիրներ միջազգային իրաւունքի, մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ։ Ապա թված են այդ ոճիրներից գլխաւորները—կէտտէլէրի սպանութիւնը կանոնաւոր զօրքերի ձեռքով, որոնք հնազանդվում էին իրանց հրամանատար օֆիցերին, դեսպանատների պաշարումը «Մեծ-Բռունցքից» եւ կայսերական զօրքերից՝ արքունիքից ստացված հրամանների զօրութեամբ։ Յայտագիրը մեղադրում է չինական կառավարութիւնը դաւաճանութեան մէջ, որովհետեւ իր արտաահմանեան ներկայացուցիչների միջոցով նա յայտնել է, թէ պաշտպանում է դեսպանատները, այն ինչ իսկապէս հրամայել է պաշարել նրանց։ Կառավարութեան վրա է բարդվում մեղադրանքը եւ նրա համար, որ սպանվել է եապօնական դեսպանատան կառավարիչը՝ կայսերական զօրքերի ձեռքով, որ օտարերկրացիները տանջանքների են ենթարկվել եւ սպանվել են Պեկինում ուշատ նահանգներում, որ «Մեծ-բռունցքները» եւ կայսերական զօրքերը պղծել են օտարերկրացիների գերեզմանները եւ վիրաւորանքներ են հասցրել մեռելներին։ «Հարկադրված լինելով գնալ Պեկինի վրա—ասված է ապա յայտագրում—ճնշելու չինական զինուորական ոյժերը, դաշնակից պետութիւնները պատրաստ են կատարել Չինաստանի խնդիրքը խաղաղութեան մասին հետեւեալ պայմաններով, որոնք ճանաչվում են անպայման անհրաժեշտ՝ կատարված յանցանքների կրկնութիւնից ապահովվելու համար։ 1) Պէտք է Բերլին ուղարկվի մի չինական պրինց՝ այնտեղ ցաւ յայտնելու համար Կէտտէլէրի սպանութեան առիթով. բացի դրանից այն տեղում, ուր կատարվել Կէտտէլէրի սպանութիւնը, պէտք է արձան կառուցվի, որի վրա լատիներէն, գերմաներէն եւ չինարէն լեզուներով ցաւ կը յայտնվի կայսրի կողմից Կէտտէլէրի սպանութեան մասին. 2) ամենախիստ, յանցանքներին համապատասխան, պատժի պէտք է ենթարկվեն այն անձինք, որոնք յիշատակված են դեկտեմբերի 8-ի կայսերական հրամանագրում։ (Նրանց անունները չեն յիշված։ Խօսքը պրինց Տուանի եւ երեք ուրիշ պրինցների, դուքս Լաուի, Զժաօչժուանջասի, Եաուգի, Կինչենի եւ ուրիշ շատ անձերի մասին է, որոնց վրա դեռ պէտք է մատնացոյց անեն դեսպանները)։ Պետական քննութիւնները պէտք է վերացվեն հինգ տարով այն քաղաքներում, որտեղ օտարերկրացիները սպանվել են կամ ենթարկվել են անզգութիւնների. 3) Եապօնիան պէտք է արժանաւոր բաւարարութիւն ստանայ Սուգիհարայի սպանութեան համար. 4) քաւիչ արձաններ պէտք է կառուցվեն օտարերկրացիների այն բոլոր գերեզմանատներում, որտեղ չիրմները սրբապղծված են. 5) զէնքի եւ ռազմամթերքի ներմուծումը, նոյնպէս եւ նրանց ուղղելը արգելվում են. 6) համապատասխան վարձատրութիւն է տրվում պետութիւններին, ընկերութիւններին, առանձին անհատներին, ինչպէս եւ այն չինացիներին, որոնք անարդար վարմունքի ենթարկվեցին նրա համար, որ ծառայում էին օտարերկրացիների մօտ։ Չինաստանը պէտք է համապատասխան ֆինանսական միջոցներ ձեռք առնի, որոնք ընդունելի լինեն պետութիւններին եւ ապահովեն վարձատրութեան հատուցումն եւ փոխառութիւնների վճարումը. 7) դեսպանատներում պէտք է լինեն մշտական պահակախմբեր եւ դեսպանական հողաբաժինները պէտք է ամրացնվեն. 8) Տակուի ամրոցները, նոյնպէս եւ Պեկինի ու ծովի մէջ գտնվածները պէտք է հիմնայատակ լինեն. 9) օտարերկրեայ զօրքերը պէտք է գրաւեն այն կէտերը, որոնք անհրաժեշտ կը համարվեն ապահովելու հաղորդակցութիւնը Պեկինի եւ ծովի միջեւ. 10) ամբողջ պետութեան մէջ, երկու տարվայ ընթացքում, պէտք է կազմվեն ազդարարագրեր, որոնցով մահվան պատիժ սպառնացվի այն բոլոր անձերին, որոնք կը միանան օտարերկրացիների հետ թշնամաբար վերաբերվող ընկերութիւններին եւ որոնց մէջ թված լինեն այն պատիժները, որոնք չինական կառավարութեան կողմից կը նշանակեն վերջին խռովութիւնների ղեկավարներին։ Ապա պէտք է հրատարակվի կայսերական հրաման, որով պատասխանատուութիւն դրվի փոխարքաների, նահանգապետների եւ նահանգական ուրիշ մանդարինների վրա այն ապըստամբութիւնների համար, որոնք ուղղված կը լինեն օտարերկրացիների դէմ, եւ դաշնագրերը խախտելու համար նրանց պաշտօնավարութեան շրջանում, եթէ այդ տեսակ ապստամբութիւնները եւ խախտումները չեն ճնշվի։ Պատասխանատու աստիճանաւորները պէտք է անյապաղ արձակվեն եւ այլ եւս երբէք չընդունվեն պետական ծառայութեան մէջ. 11) Չինաստանը պէտք է սկսէ վերաքննել առեւտրական դաշնագրերը՝ առեւտրական յարաբերութիւնները հեշտացնելու համար. 12) Ցունդլիեամէնը օտարերկրեայ դեսպանների ընդունելութեան համար պէտք է փոփոխվի այն ձեւով, որ ցոյց կը տան պետութիւնները։

Մինչեւ որ վերոյիշեալ պայմանները չը կատարվեն, պետութիւնները նոյն իսկ մօտաւորապէս չեն կարող յայտնել այն ժամանակամիջոցը, որի ընթացքում նրանք կը հեռացնեն իրանց զօրքերը, որոնք այժմ գրաւում են Պեկին եւ նահանգները։

ԼՕՆԴՕՆ։ Հաղորդում են, լուրերին նայելով, թէ բօէրները գտան այն թնդանօթները, ռազմամթերքը եւ պաշարեղէնը, որ նրանք թաղել էին դէպի Օրանժ գետը նահանջելուց առաջ։

Գնդապետ Կարրինգտոն վերադառնում է Անգլիա։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բրիտստաուն քաղաքը 30-ին(?) գրաւված է բօէրներից։

Ի նկատի առնելով իրերի լուրջ դրութիւնը՝ «Ստանդարտ բանկը» իր դրամարկղները Գրաֆրէյնէտի, Էբէրդինի եւ Կրադօկի գաղթականութիւններից ուղարկեց Էլիզաբէթ նաւահանգիստը, իսկ ուրիշ տեղերից Կապշտադտ։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բօէրների երեք զօրաբաժինները, որոնք խուժել են դէպի Կապի գաղթականութիւնը, գտնվում են Գերցօգի, Ֆիլիպպ Բօտայի եւ Գասսբրօկի հրամանատարութեան տակ. մի ուրիշ, չորրորդ զօրաբաժին եւս անցաւ Օրանժ գետը Զօուտպանսդրիֆտի մօտ օգնելու այն զօրաբաժնին, որ գտնվում է այժմ Ֆիլիպպստաունի մօտ։

Պեկին։ Դեսպանները որոշեցին հրաւիրել չինական լիազօրներին երկուշաբթի օրը՝ միացեալ յայտագիրը նրանց յանձնելու համար։

ԲԵՐԼԻՆ։ Վալդերզէէ հաղորդում է Պեկինից, թէ Պաօտինֆուից մայեօր Հայնէի հրամանատարութեամբ ուղարկված զօրաբաժինը դեկտեմբերի 2-ին Իւշցզինսեանի մօտ, 90 կիլոմետր Պաօտինֆուից դէպի հիւսիս-արեւելք, ընդհարումն ունեցաւ չինական կանոնաւոր զօրքերի հետ, որի ժամանակ մի օֆիցեր եւ երկու ունտեր-օֆիցերներ թեթեւ կերպով վիրաւորված են։ Դեկտեմբերի 6-ին մի զօրաբաժին, գնդապետ Գրիւբէրի հրամանատարութեամբ, Տեանձինից ուղարկված է Ֆօնտայի վրայով դէպի Իւշցզինսեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի 9-ին տեղի ունեցաւ սիմֆոնիական համերգ, որ կազմակերպել էր Դոլինա յօգուտ համբ եւ խուլ երեխաների։ Սկզբից առաջ կատարվեց օրհներգ։ Երաժշտական խումբը կառավարում էր Ցուժպէ։ Մասնակցում էին Կայսերական օպերայի երգիչներ Դոլինա եւ Տարտակով, յայտնի ջութակահար Էմմանուէլ Օնդրժիչեկ եւ դաշնակահար Պիւնո։ Երգիչները արժանացան կըրծքանշանի, Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի անուանադրոշմով, համբ եւ խուլ երեխաների հոգաբարձութեան կողմից։ Մուտքը հասաւ 8000 ռուբլու։

11 դեկտեմբերի

ՍԱՐԱՏՕՎ։ Թագաւոր Կայսրի առողջանալու առիթով մայր տաճարում գոհացողական մաղթանք կատարվեց։

ՊԱՐԻԶ։ Ռուսաց դեսպան իշխան Ուրուսովի նախաձեռնութեամբ, ռուսաց դեսպանատան եկեղեցում գոհացողական մաղթանք կատարվեց Թագաւոր Կայսրի առողջանալու առիթով։

ՊԷԿԻՆ։ Չինական լիազօրները վաղը կը յանձնեն իրանց լիազորութիւնները օտար պետութիւնների ներկայացուցիչներին։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Երկիւղ են կրում, որ դրութիւնը լուրջ կերպարանք է ստանում։ Գաղթականական իշխանութիւնները իրանց շատ ծածկամիտ են պահում։ Հիւսիսային շրջանի հօլանդացիները սաստիկ յուզվում են։ Վախենում են, որ նրանք միանան ներս խուժած բօէրների հետ։ Զօրքերի շարժմանը խանգարում է այն հանգամանքը, որ շատ երկաթուղիական բաժիններում ճանապարհը աւերված է անձրեւներից։ Բօէրները Ֆիլիպպստաում յանկարծակի յարձակվեցին մի զօրաբաժնի վրա, որ ուղարկված էր հողաչափական աշխատանքներ կատարելու համար, գերի վերցրին նրան եւ ապա ազատութիւն տուին, ոչնչացնելով բոլոր գործիքները։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Պեկինից ստացված տեղեկութիւններին նայելով՝ պետութիւնների միացած յայտագիրը կը յանձնվի Լի-Խունգ-Չանգին, երբ նա բաւականաչափ կառողջանայ։

ԲԵՐԼԻՆ։ Կայսրը այցելեց կանցլեր Բիւլովին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ԵՒԼՍՏ։ Ազօթատան երէցփոխ Յովհ. Պօպով։ Լուրեր տպելու համար խմբագրութիւնը փող չէ վերցնում. ձեր ուղարկած նամակագրոշմների գինը 1 ռուբլի մրցրինք չքաւոր ուսանողների օգտին հաւաքված գումարի մէջ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Դզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Ֆ. Պրօսասովիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մորթու հ.
Դ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Պետերբուրգի պարսից դեսպան Միրզա-Ռիզա-խանի տանը, Գուդովիչի փողոցի վրա,
ՏՐՎՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՎԱՐՁՈՎ
մէջին եւ ներքին յարկերում, առաջինը տաս սենեակներից բաղկացած, երկրորդը՝ տասնմէկ։ Գինի մասին դիմել Հաջի-Մամէդ-Բաղր Ռիզաեվին, Սիօնի փողոցի վրա, Զիթախօվի քարավանսարայում։ (Ե. Հ. Շ.) 1—3

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՁԱՐՁԱՐԱՆՔԻ ԵՒ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ
ԳԻՐՔԸ
(Մեծ պասի ամեն մի օրվայ համար քարոզներ)։
Գինն է 1 ռուբլի։
Դիմել՝ Թիֆլիս, Գաբրիէլ քահանայ Տէր-Գաբրիէլեանցին։ (Ե. Ո.) 1—2

ԿՕՆՑԷՐՏ

Դաշնակահար Ս. Ն. ԵԱԿԻՄՕՎՍԿՈՒ
մասնակցութեամբ երգչուհի
Լ. Ֆ. ՖԵՐՏԻՆԳԻ

Թիֆլիսի ժողովարանի շինութեան մէջ կը տայ կօնցէրտ, դեկտեմբերի 16-ին։ Բօեալ Բէկէրի։
Տոմսակները ծախվում են ժողովարանի շվէյցարի մօտ, ամեն առաւօտեան 11-ից մինչեւ 3 ժամը եւ երեկոյեան ժամը 7-ից։ 1—3

21—32 (4.)

Լոյս տեսան եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1901 թ.
ԾՈՑԻ եւ ՊԱՏԻ
(Շերեկ)
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարված է Ներսէս V Կաթողիկոսի, Մ. Նալբանդեանի, Րաֆֆիի եւ Ց. Այվազովսկու պատկերներով, ունի բոլորովին նոր եւ հետաքրքիր յաւելուած՝ ամենաօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երազահան ու նոր զուարճալի վիճակարան։

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ եւ ընտիր մտքեր, հայոց եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բոլորովին նոր ծիծաղաշարժ առակներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լեզուներ, ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, չուտասելուկներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ։ Տախտակը չքեղ եւ ճաշակով պատրաստված է յայտնի լիտոգրաֆիայում, 15 գոյնով։ Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը տպագրված առանձին թերթով կարող են ստանալ ձրի։

Գները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ. գումարով գնողներին լինում է զիջում։

Դիմել՝ Александрополь. Карапету Апинянъ, կամ Alexandrople Karapet Apinian (Caucase)։ Ցանկացողները թող չտապեն, որ իր ժամանակին կարողանաք պատուէրները ճշդութեամբ կատարել։ (Ե) 11—12

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կայտին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագումի. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Աբիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 23—100

ՏԱԼԻՍ ԵՄ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ
ՀԱՑԵՐԷՆԻ եւ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
նաև գերմաներէնի
Հասցէ՝ ՇԱՆԹ
Фрейлинская 14, первый этажъ. 2—8

ՄԵՂՐ
ՈՍԿԵԳՈՑՆ, ՀՈՏԱՒԷՏ
Ա. Մխիթարեանի մեղուանոցից
ծախվում է
Ֆրէյլինսկայա փողոցում, № 14 տան մէջ։
Պուդը 9 ռուբլի։

„ՇՂԹԱՅ"
ՆԱԻԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԶՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի գիտութիւն ընկերութեան բաժնետէրերի, որ ընկերութեան առաջին ընդհանուր ժողովի շարունակութիւնը,
Վարչութեան հինգերորդ անդամի ընտրութեան համար,
նշանակված է կիրակի, դեկտեմբերի 17-ին, առաւօտեան ժամի 10-ին, քաղաքային դուժայի դահլիճում։ (Ե. Հ. Շ.) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են հետեւեալ նոր լոյս տեսած՝
1) Հ. Գիւտ Աղանեանի «Պատի օրացոյցը» (XIII տարի), տպված Մոսկվայում, գինն է 50 կ.։
2) Հ. Պարոնեանի «Քաղաքավարութեան վնասները», հրատ. Գիւտ ա. ք. Աղանեանի Գինն է 75 կոպ.։
3) Տմբլաչի Խաչանի—Տնգլբաղ եւ զուռնա տմբլա. գ. 40 կ.։
Նոյն տեղն ընդունվում է բաժանորդագրութիւն տ. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցի բոլոր երկերի, որոնք մամուլի տակ են եւ լոյս կը տեսնեն մի մեծ հատորով։ Բաժանորդագինն է 5 ռուբլի. լոյս տեսնելուց յետոյ կարժենայ 8 ռուբլի։
Դիմել՝ Въ Тифлисѣ, Центральную Книжную Торговлю. Ե. Ո. 5—17

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 20 դեկտեմբերի (2 յունվարի)—շոգենաւ՝ ԱՆԱՏՕԼԻ, կապիտան ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են տեղերականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նարէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. Շ.) 5—20

Ա. Փրիդօնեան եւ ընկ. Բանկային Գրասենեակը
Ապահովացնելու համար ներքին փոխառութեան վիճակախաղի տոմսերը ցնոր փոփոխութիւն վերցնում է՝

2 ր.—25 կոպ. ամեն մէկ տոմսի համար	I կարգի	1901 թ.	յունվարի	2-ից
1 ր.—75 կոպ. » » » »	II »	1901 »	մարտի	1-ից
1 ր.—10 կոպ. » » » »	III »	1901 »	մայիսի	1-ից

Բացի 15 կոպ. մարկան ամեն մէկ անդորրագրից։ Գրասենեակը հեռագրով ու վերադիր վճարով չէ ապահովացնում։ (Չ. Ո. Շ.) 3—3

ԲՕԺՕՓԻ ՅԵԼՈՒԼԵԱՐՆԻ ՍԵՐՄ
Բաղդադի առաջնակարգ եւ սպիտակ տեսակ
Պասքէօրեան դրութեամբ պատրաստված
հսկողութեամբ
ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԵԱՆԻ
Առաջին կարգի վկայեալ մասնագէտ Պրուսայի Կայսերական Շերամապահական վարժարանէն։

Երկար տարիներէ ի վեր Թիւրքիոյ, Կովկասու եւ Պարսկաստանի մէջ արդէն փորձուած եւ ծանօթ ֆիրմա ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԵԱՆԻ մասնաւոր գործարանին մէջ Պասքէօրեան դրութեամբ ընտրված Պաղտատի տեսակ սպիտակ հունտերէն յատկապէս եւ մասնաւոր խնամօք պատրաստել տուած, եւ որոնցմէ առաջին պարտիան արդէն հասած եւ յանձնած ենք Շերամապահական կայարանն քննութեան համար։
Ամեն անոնք՝ որք կը փափաքին դիւրամատչելի գիներով լաւ ապրանք գնել եւ ապահով ըլլալ հունտերու տեսակին վրա, թող հաճին դիմել մանրամասնութեանց համար Մայսուրաձէ եւ Խօջափարուխով քարվանսարան № 16—17, **Ա. Կ. ԱՐՄԷՆ** եւ ընկ. գրասենեակը։
(Ե. Հ. Շ. 17—30

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եռաշխատորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Առևտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավաստ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1901 թվի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՒՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։
Ցանկացողները թող դիմեն դրատոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մոտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ (Ե. Հ. Շ) 10—20

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Декабря 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Воинская ул., № 27.